

ԼԵՎՈՆ ԼԻՍԻՅՅԱՆ
(1892—1992)

Գ. Բ. ՂԱՐԻՔՂԱՆՅԱՆ (ՀՀ ԳԱ ակադեմիկոս)

Լ. Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

1992 թ. հունվարի 9-ին (1991 թ. դեկտեմբերի 27-ին) լրացավ տաղանդավոր գիտնական-հայագետ, հասարակական գործիչ, ԽՍՀՄ-ի Մատենադարանի երախտավոր Լևոն Ստեփանի Լիսիցյանի ծննդյան 100-ամյակը։ Նա ապրեց կյանքի երեք տասնամյակը շքույրած, սակայն գիտական աշխարհը հագեցած նրա իմաստասիր կյանքը ի սպաս դրվեց մայր ժողովրդի բարօրությանը։

Լ. Լիսիցյանի կարճատև ու լարված գործունեությունը կարելի է բաժանել չորս փուլի. ուսանողական, որը զուգորդված էր նրա գիտական գործունեության սկզբնավորման հետ, մասնակցությունը հայկական կամավորական խմբերի գործողություններին՝ 1915—1918 թթ., ակտիվ աշխատանք Ի համաշխարհային պատերազմի հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստները բացահայտող հանձնաժողովում, ուր նա վարում էր գիտական քարտուղարի պաշտոն և էջմիածնի կուլտուր-կրթական հաստատության, ապա կուլտուր-պատմական ինստիտուտի ղեկավարման շրջան։

Լ. Լիսիցյանը ծնվել է Թիֆլիսում, հայտնի գիտնական, հայագետ, մանկավարժ, գրող, թարգմանիչ, հասարակական գործիչ Ստեփան Դանիելի Լիսիցյանի ընտանիքում¹։ Լևոնի մայրը՝ Եկատերինա (Կատարինե) Քրիստափորի Լիսիցյանը, Թիֆլիսի հայոց երկսեռ գիմնազիայի հիմնադիրն ու տնօրենը, հայտնի մանկավարժ էր, հասարակական գործիչ և հրատարակիչ։

Լ. Լիսիցյանի բազմակողմանի ընդունակությունները դրսևորվել են վաղ հասակում, նա աչքի է ընկել սուր հիշողությամբ ու սթափ մտքով։ Իր մարդամոտության ու սրամտության շնորհիվ վայելել է շրջապատի սերն ու հարգանքը։ Թիֆլիսի գիմնազիայի ավարտել է ոսկե մեդալով, զուգահեռաբար ավարտել է նաև տեղի երաժշտական ուսումնարանը։ Նա հրաշալի ջութակ էր նվագում²։ Լ. Լիսիցյանը մի տարի ուսանել է Մյունխենի համալսարանում, այնուհետև ընդունվել Մոսկվայի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը։ Լ. Տոլստոյի հուղարկավորության կապակցությամբ տեղի ունեցած ուսանողական ցույցերին մասնակցելու և Ցասնայա Պոլյանա գնալու համար նրան հեռացնում են համալսարանից։ Սովորելու տենչը նրան տանում է Ավստրիա, ուր ընդունվում է Վիեննայի համալսարան։ Այնտեղ ուսանելու տարիներին (1911—1914 թթ.) Լ. Լիսիցյանը միաժամանակ աշխատում է Վիեննայի արվեստի ինստիտուտում։ Նա աշակերտում է պատմության ու ճարտարապետության հռչակավոր ուսուցչապետ Յոզեֆ Ստրոփ-գովսկուն, դառնում վերջինիս սիրելի ուսանողն ու հայկական մշակույթի հարցերով խորհրդատուն։ Բնությունից օժտված լինելով բացառիկ աշխա-

¹ Կենսագրական տվյալները քաղված են Լևոն Լիսիցյանի անձնական արխիվից [ՀՀ Պետական պատմական կենտրոնական արխիվ (պատահետև՝ ՊՊԿԱ), ֆ. 428]։

² Աշակերտական մի համերգի ժամանակ հայտնի ջութակահար Հ. Նալբանդյանը բնմ է բարձրանում, գրկում պատանուն, շոյում նրա գլուխը և ասում. «Դու իսկական ջութակահար կդառնաս, երբեք չթողնես ջութակը» (Լ. Լիսիցյանի քրոջ հուշերից—Գ. Ղ., Լ. Վ.), Հետագայում թեև գիտական հետազոտությունների ձգտումը գերազանցում էր նրա մեջ երաժշտության հանդեպ ունեցած սիրուն, նա շարունակում էր ջութակ նվագել։

տասիրություններ, տիրապետելով մի շարք լեզուներին³, քաջատեղյակ հայոց հին ձեռագիր մատյաններին, նախանձախնդիր հայ մշակույթի տարածմանը, Լ. Լիսիցյանը, հիրավի, հայտնագործություն էր Ստրժիգովսկու համար: Ուսուցչապետը մեծ ապագա էր գուշակում իր սանի համար: Տակավին 1913 թ. նա առում էր, թե նրանից «դուրս պիտի գա ine tüchtige Wissentschallische Kraft» (նշանակալից գիտական ուժ)⁴ և հայ ճարտարապետության տեսության ու պատմության մի շարք խնդիրների լուծումը կապում էր նրա հետ: Յո. Ստրժիգովսկին իր «աջ թև» Լ. Լիսիցյանին առաջարկում էր մշակել դրանք և մի աշխատություն պատրաստել հայ ճարտարապետության մասին, որ պիտի հրատարակվեր ինստիտուտի կողմից⁵: Նույնիսկ 1920 թ. Լ. Լիսիցյանին գրած նամակում նա տակավին փայփայում էր համատեղ աշխատելու հույսը՝ Հայաստանի վերաբերյալ աշխատության վրա⁶:

Լ. Լիսիցյանի խորհրդով ու աջակցությամբ, նրա հոր՝ Մ. Լիսիցյանի ջանքերով հավաքված նյութական միջոցներով 1913 թ. գարնանը նշանավոր ճարտարապետ Թ. Թորամանյանը գալիս է Վիեննա: Իսկ մինչ այդ Լ. Լիսիցյանը Ստրժիգովսկուն էր ներկայացրել Թ. Թորամանյանի մի քանի աշխատությունների գերմաներեն թարգմանությունները: Հայտնի է, թե ինչ վճարող նշանակություն ունեցավ ականավոր ճարտարապետի և ավստրիացի հիտեալան-տեսաբանի անձնական ծանոթությունն ու հետագա համագործակցությունը հայոց ազգային ճարտարապետությունը Նվրոպային ծանոթացնելու գործում: Անշուշտ, այս փոխհարաբերությունների մեջ Լիսիցյանը կարևոր դեր էր կատարել:

Վիեննայում ուսանելու և աշխատելու տարիներին Լ. Լիսիցյանն առիթ է ունենում անձնապես համագործակցելու Թ. Թորամանյանի հետ: Ճարտարապետի անձի ու գործի նկատմամբ նա տածում էր պաշտամունքի հասնող սեր: Թ. Թորամանյանը մնում է այնտեղ մի որոշ ժամանակ, մշտապես գտնվելով Լ. Լիսիցյանի հոգածության ներքո, պարապում արվեստների պատմության ինստիտուտում: Ճարտարապետի՝ 1913 թ. ամռանը հայրենիք վերադառնալուց հետո Լ. Լիսիցյանը շարունակում է հետաքրքրվել նրա գործունեությամբ, ամեն կերպ աշխատում թեթևացնել նրա նյութական ծանր վիճակը: Հորը հղած գրեթե բոլոր նամակներում նա հարցնում է ճարտարապետի մասին. «Ո՞ր է նա այժմ, արդյոք լուր ունե՞ս, ինչպե՞ս է Թորամանյանի բանը, ո՞չ մի արդյունք, ո՞չ մի քաջա՞ն և ալլա՞»:

Թորամանյանի Վիեննա գալը մեծապես նպաստեց և արագացրեց Վիեննայի արվեստների պատմության ինստիտուտի կողմից գիտական արշավախմբի կազմակերպումը: Վերջապես 1913 թ. աշնանը Յո. Ստրժիգովսկին, արվեստաբան, դոկտոր-պրոֆեսոր Հենրիխ Գլյուկը, ազգագրագետ էդմոնդ Կյուտլերը, Լ. Լիսիցյանը (տեղում նրանց պետք է միանար Թ. Թորամանյանը) ուղևորվում են դեպի Հայաստան: Լ. Լիսիցյանը գործուն մասնակցություն է ցուցաբերում գիտարշավի ինչպես կազմակերպական աշխատանքներին, այնպես էլ զուտ գիտական հարցերի պարզաբանմանն ու մշակմանը: Այսպես՝ նրա օգնությամբ գիտարշավի ավստրիացի մասնագետները հանդիպում են ունենում տեղի բնակչության հետ, որոնցից մեկի՝ սիրող-

³ Բացի հին և ժամանակակից հայերենից և ռուսերենից, նա ազատ տիրապետում էր գերմաներենին, գիտեր՝ անգլերեն և ֆրանսերեն, լատիներեն, սևուամասիրում էր արաբերեն, հունարեն, սանսկրիտ և այլ լեզուներ:


⁴ ՊՊԿԱ, ֆ. 428, գ. 1, գ. 104, թ. 62:

⁵ Նույն տեղում:

⁶ Յո. Ստրժիգովսկու նամակի գերմաներեն բնագիրը գտնվում է ՊՊԿԱ, ֆ. 428, գ. 12-ում, Տե՛ս նաև Վ. Էվոյան, Փառաթղթեր Լևոն Լիսիցյանի մասին (Բանբեր Հայաստանի արխիվներ, 1972, № 1, էջ 190):

⁷ ՊՊԿԱ, ֆ. 428, գ. 1, գ. 104, թ. 8—9, 65—66, գ. 105 և ալլա:

գավառագետ Հարություն Կարանյանի տանը տեղի ունեցած հանդիպման մասին իր մենագրության մեջ հիշատակում է Յո. Ստրժիգովսկին⁸։



Ավստրիացի գիտնականները Լ. Լիսիցյանի և Թ. Թորամանյանի հետ 20 օրվա ընթացքում անցնում են Ալեքսանդրապոլ, Մարմաշեն, Հառիճ, Քասախ, Աշտարակ, Եղվարդ, Գառնի, Գեղարդ, Էջմիածին և այլ երթուղիներով, տեղում ծանոթանում, լուսանկարում և չափագրում հուշարձանները։ Լ. Լիսիցյանը բացի արշավախմբի թարգմանիչ լինելուց, վերծանում էր հուշարձանների վիմագիր արձանագրությունները⁹։ Իր նախաձեռնությամբ նա գյուղացիներին մեկի ուղեկցությամբ բարձրանում է Գեղամա լեռները, անձամբ տեսնելու և մոտիկից ծանոթանալու տեղի ժայռապատկերներին և վիշապներին, ուսումնասիրում և չափագրում է դրանք, ապա հավաքած նյութերի հիման վրա հորված պատրաստում¹⁰։

Լ. Լիսիցյանին հետաքրքիր ու հայ ժողովրդի մշակույթի համար հույժ կարևոր աշխատանք էր սպասվում արշավախմբի Վիեննա վերադառնալուց հետո։ Անհրաժեշտ էր մշակել, դասակարգել ու համապատասխան եզրակացություններ անել հավաքած նյութից։ Եվ նա գործի է լծվում մեծ եռանդով։ Կարճ ժամանակամիջոցում Լ. Լիսիցյանը ծանրակշիռ ավանդ է ներդնում նյութերի գիտական մշակման գործում, և ամենևին էլ պատահական չէ նրա անվան հիշատակությունը Յո. Ստրժիգովսկու մենագրության առաջին հատորի տիտղոսաթերթի վրա՝ Թ. Թորամանյանի ու Հ. Գլյուկի անունների

⁸ Jucef Strzygowski, Die Baukunst der Armenter und Europa, 1918, B. 1, Wienn, S. 16.

⁹ Արշավախմբի աշխատանքների մասին ուշագրավ և հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել ծնողներին ուղղված Լ. Լիսիցյանի նամակներում (ՊՊԿԱ, ֆ. 428, ց. 1, գ. 104, թ. 53 և ուրիշներ)։

¹⁰ Գիտական արժեքը չկորցրած գերմաներեն այս ձեռագիրը տարիներ անց լույս տեսավ Գ. Տիրացյանի թարգմանությամբ (տե՛ս՝ Լ. Լիսիցյան [Գեղամա լեռների ժայռապատկերներից], ՀՍՍՀ ԳԱ Լրագրի հասարակական գիտությունների, 1972, № 1)։

հետ: Սակայն, ցավոք, նրան չի հաջողվում ավարտին հասցնել գործը. սկսվում է I համաշխարհային պատերազմը, և Լ. Լիսիցյանը վերադառնում է Թիֆլիս, թողնելով ամեն ինչ և իր հետ տանելով միայն անբաժան ջութակը: Հայրենիքի համար ծանր, տագնապալի օրերին (1914 թ. հուլիս) Լ. Լիսիցյանը, Թիֆլիսից գալով Հայաստան, ընդգրկվում է կամավորական շարժման մեջ: Սկզբում նա ընդունվում է 5-րդ կամավորական գունդ, իբրև շարքային զինվոր, ապա նշանակվում հայ փախստականներին եղբայրական օգնության կոմիտեի լիազոր ներկայացուցիչ: Մեկնելով ռազմաճակատ՝ ռուս-թուրքական սահմանամերձ գոտին, լինում է էջմիածնում, Իգդիրում, Բիազդինում, Բայազետում, Սարիզամիշում¹¹: Նա ականատես է լինում հայրենակիցների տառապանքներին և անում ամեն ինչ իր կարելիության սահմաններում նրանց վիճակը գուլգն-ինչ թեթևացնելու համար¹²: Նրա գործունեությունը եղբայրական օգնության կոմիտեի կազմում չի սահմանափակվում փախստականներին սատարելով: Նույնիսկ այդ դժնդակ ժամանակներում հայկական մշակույթի ոչ մի արժեք, լինելով ազգագրական-կենցաղային, թե հնագիտական, չի վրիպում նրա տեսադաշտից, մամուլում հանդես է գալիս լեզվաբանության խնդիրների վերաբերյալ բանավեճային հոդվածով¹³ և այլն: Սակայն ծանր հիվանդության պատճառով ընդհատվում է նրա եռանդուն գործունեությունը ռազմաճակատում: Ապաքինվելուց հետո նա վերադառնում է Թիֆլիս:

Այդ շրջանում Լ. Լիսիցյանը իրագործում է իր վաղեմի երազանքը՝ աշակերտում է Մառին: Նա մեկնում է Պետերբուրգ և հաջողությամբ ուսանում ականավոր գիտնականի և հայագետի ղեկավարությամբ: Այստեղ ծանոթանում է Հեղինե (Ծինա) Ավետիսի Նազարբեկի* հետ, և 1919 թ. նրանք ամուսնանում են: Դրանից առաջ, 1917 թ., զորակոչվել է Թիֆլիս՝ սպայական դպրոցում սովորելու:

1918—1920 թթ. Լ. Լիսիցյանը նորից Թիֆլիսում է: Սկզբից աշխատում է Մայիլյան եղբայրների արշավախմբում, որը գործում էր Հայաստանում օգտակար հանածոներ հայտնաբերելու նպատակով: 1918 թ. պատերազմի ավարտից հետո Թիֆլիսում բտեղծվում է ռազմապատմական մի հանձնաժողով, որի խնդիրն էր պարզել ու ճշտել հայ ժողովրդի կրած վնասների, մարդկային զոհերի չափը: Այս հանձնաժողովում 1918—1919 թթ. Լ. Լիսիցյանը վարում է պատասխանատու քարտուղարի պաշտոնը: Նրա տնօրինությանում ի մի են բերվում գիտական ու քաղաքական բացառիկ արժեք ունեցող փաստաթղթեր, այդ թվում նաև զորավար Անդրանիկի գործունեության վերաբերյալ¹⁴, Հանձնաժողովի աշխատանքները զլխավորում էր գեներալ Ա. Կուլեբայկինը, որը խոր համակրանք էր տածում Լ. Լիսիցյանի հանդեպ: Մեր մեծ բանաստեղծ Հ. Թումանյանը մշտապես աջակցում էր հանձնաժողովի և անձամբ Լ. Լիսիցյանի գործունեությանը:

1920 թ. կեսին Հայաստանում տիրող ծայրահեղ լարված ու ծանր վիճակը Լիսիցյանին ստիպում է թողնել աշխատանքը հանձնաժողովում, երիտասարդ կնոջն ու մանկահասակ որդուն և մեկնել Երևան: Շուտով Հայաստանում

¹¹ Ցավոք, Լիսիցյանի կյանքի և գործունեության այս հայրենանվեր կողմը տարիներ շարունակ հայտնի պատճառով գրեթե չի ուսումնասիրվել և այժմ կարոտ է առանձին լուսաբանման ու արժեքավորման:

¹² Պահպանվել է Գարեգին Հովսեփյանին ուղղած նրա նամակը էջմիածնի գավառում հայ գաղթականներին տեղավորելու և սննդով ապահովելու մասին (տե՛ս Վ. Էվոյան, Նշվառչ, փաստաթուղթ № 4, էջ 188):

¹³ Նույն տեղում, փաստաթուղթ № 3, էջ 184:

* Հ. Նազարբեկը դուստրն էր հնչակյան կուսակցության հիմնադիրներ Մարո և Ավետիս Նազարբեկներին:

¹⁴ Այդ փաստաթղթերը 50 տարի անց հայտնաբերվեցին Մոսկվայում, Լ. Լիսիցյանի ալբոմ տանը, և քույրը՝ Ն. Լիսիցյանը, դրանք հանձնեց ՊԳԿԱ (Ֆ. 428),

տանում հաստատվում են նոր կարգեր. նրա վրա պարտականություն է դրվում ազգայնացնել էջմիածնի կուլտուր-կրթական հիմնարկությունները, նպաստել դրանց վերածնությանը:

Լ. Լիսիցյանի կյանքի այս վերջին շրջանի մասին արխիվային փաստաթղթերը վկայում են, որ այն ևս եղել է հագեցված ու լարված: Լ. Լիսիցյանը առաջիններից մեկն էր, որ ձեռնամուխ եղավ պետական Մատենադարանի և պատմության թանգարանի կազմակերպմանը: Բնականաբար, նա չի ունեցել ոչ գրասենյակ, ոչ աշխատողների հաստիքներ: Մեզ հասած բոլոր փաստաթղթերը նրա ձեռքով գրված գեկուլցյների, հաշվետվությունների, նամակների պատճեններն են: Դրանք ցույց են տալիս, թե ինչպես էր նա ձգտում և համառ ջանքեր թափում ի մի բերելու, հավաքելու համազգային նշանակություն ունեցող հոգևոր գանձերը, այդ թվում նաև մասնավոր անձանց մոտ պահվողները: Նրա նախաձեռնությամբ և գործուն մասնակցությամբ սկսվում են էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտի աշխատանքները (նախկին կուլտուր-կրթական հիմնարկությունների հիմքի վրա): Լուսավորության ժողովում Ա. Հովհաննիսյանի 1920 թ. դեկտեմբերի 28-ի կարգադրությամբ նա տեղափոխվում է Նրևանի նորաբաց համալսարան՝ դասախոսական աշխատանքի¹⁵: Պաշտոնը հանձնելու կապակցությամբ նա մանրամասն հաշվետվություն է ներկայացնում իր կատարած գործունեության մասին¹⁶, Այս փաստաթղթում նա անդադառնում է իր իրավասության տակ գտնվող Մատենադարանին, թանգարանին, ճեմասրահին, տպարանին, Զվարթնոցի ավերակներին՝ հարակից շինություններով, «օբսերվատորիա» կոչված կիսավարտ շենքին և էլեկտրակայանին՝ ներկայացնելով յուրաքանչյուրի վիճակը: Նա ցավով է նշում, որ Մատենադարանն ու թանգարանը, փաստորեն, դարձել էին «մեռած կուռքերի» անշունչ ժողովածու: Թանգարանում ազգագրական և գեղարվեստական հազվագյուտ իրերը անխնա փչանում էին ցեցից կամ խոնավությունից, ինչպես, օրինակ, ազգագրական հանդերձները և նկարները: Մատենադարանում գրքերը և ձեռագրերը խառն էին և երկշարք դարսված: Զվարթնոցի շինությունները այդուհետ թողնված են իրենց բախտին, տպարանը և էլեկտրական կայանը փոշու և ժանգի մեջ կորած էին: Վերջինս էլ վաղուց ի վեր չէր աշխատում մազութի բացակայության պատճառով:

Այս հիմնարկություններից ճեմարանը փաստորեն պետականացրած էր: Այնուհետև նշված են այս հաստատությունների ազգայնացման կարելիք բայերը, ինչպես, օրինակ. Մատենադարանում կատարվում է գրքերի լրիվ ստուգում և ձեռագրերի նոր համարադրում: Տպարանում սկսել է շարվել «Շապուհ Բագրատունին»:

Թանգարանի աշխատանքները միառժամանակ հետաձգվեցին մասամբ աշխատակիցների բացակայության պատճառով, մասամբ սպասելով, որ ազատվի գեղարվեստի բաժնի համար Մատենադարանի դահլիճը:

Մի այլ գեկուլցագրի մեջ Լ. Լիսիցյանը իրեն բնորոշ պարտաճանաչությամբ հաշվետվություն է տալիս կանխավճարով ստացված գումարների մասին, խոստ և խնայողաբար վերաբերմունք դրսևորում վստահված դրամի նկատմամբ:

Գործին նվիրվածությունը, Հայաստանի հին մշակույթի հանդեպ անսահման սերը պիտի փայլուն արտահայտություն ստանային նաև Լիսիցյանի դասախոսական աշխատանքում: Ցավոք, երիտասարդ գիտնականին վիճակված չէր աշխատել իր նախասիրած բնագավառում: Նա ընդամենը մի քանի դասախոսություն հասցրեց կարգալ Նրևանի համալսարանում: 1921 թ. փետրվարին կյանքի և մտավոր ծաղկման շրջանում նա ողբերգորեն զոհվեց 29 տարեկան հասակում: Լեոն Լիսիցյանի անժամանակ մահով զգացված՝

¹⁵ Հրամանի բնագիրը գտնվում է Լ. Լիսիցյանի (Ձ 428) ֆոնդում (տե՛ս Վ. Էվոյան, նշվ. աշխ., փաստաթուղթ Ձ 9, էջ 191):

¹⁶ Հաշվետվության բնագիրը ամբողջովին հրատարակել է Վ. Էվոյանը (տե՛ս Վ. Էվոյան, նշվ. աշխ., էջ 192—194):

գեներալ և բանաստեղծ Ա. Կուլեբյակինը յաջվան տարեկիցին (1922)՝ նվիրեց հետևյալ բանաստեղծությունը՝ ընծայականով¹⁷:

ПАМЯТИ ЛЕВОНА ЛИСИЦИАНА
(19/II 1921 г.)

В годину бед, когда вся жизнь—ничто,
Одна есть ценность—дух неистребимый.
Жив человек,—толпа проходит мимо,
Один, быть может, спросит:—это кто?

Работник сильный скромен у станка,
Но за него горда его работа.
Знаток посмотрит, окажет:—Сделал кто-то,
Но видимо способная рука.

А он попал под зубья колеса
И превращен в кровавый слепок мяса:
Он не предвидел гибельного часа,
Когда взмахнет жестокая коса.

На нет! Ты жив: твой подвиг налицо..
Ты жив, герой! Я в смерть твою не верю.
Ты заплатил собою року зверю.
Но от тебя осталось деревцо.
Ты из зерна на вспаханном пути
Вспоил росток его грядущей жизни..
Его плоды оценятся в Отчизне,
И ты ее за кровь твою... прости!..

Ելենե Աւետիսե Լիսիցիան յ նշան քանիքի ու գլորդորդ քարտանքի զորդորդ անուն:
քորդիքի մորդի մոլորդի զորդ: զա իքի զիքի ուն.

А. Кулебякин

Тифлис, 23. II месяц, 1922 г.

¹⁷ Քի աղբրը պահվում է Լ. Վարդանյանի ֆոնդում, ՊՊԿԱ, ֆ. 428, ց. 1, գ. 147, թ. 1: